ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ավագ սերնդի սիրելի՛ ներկայացուցիչներ, յուրաքանչյուր նոր օր առիթ է մեր որդիական սերն ու երախտագիտությունը ձեզ հայտնելու, ձեր միջոցով կյանքն ու աշխարհը ճանաչելու համար:

Ձեր ծնողական սրտացավ խրատների շնորհիվ է, որ երիտասարդությունը չի կորցնում սթափությունը, չի տրվում ժամանակավոր հովերին: Իրենց կյանքում ձեր ներկայությունն ունենալու միտքն է, որ ներշնչում այն վստահությունը, որով նրանք կարողանում են հաղթահարել կյանքի բոլոր փորձություններն ու դժվարությունները:

Սիրելի՛ ավագ սերնդի ներկայացուցիչներ, պետությունը փորձում է անել ամեն հնարավորը՝ ձեզ համար անվտանգ և լիարժեք միջավայր ստեղծելու համար: Լիահույս եմ, որ մոտ ապագայում կարողանալու ենք ստեղծել այնպիսի համակարգ, որը կապահովի յուրաքանչյուր անձի արժանապատիվ ծերությունը:

Որդիաբար շնորհավորում եմ բոլորիդ այս գեղեցիկ օրվա կապակցությամբ: Ցանկանում եմ անսպառ ուժ և առողջություն՝ ձեր զավակների հաղթանակները խաղաղ երկնքի տակ վայելելու համար:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան